


1.2.5. Տրանսպորտ

**Բեռնափոխադրումներ:** 2003թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 53.0%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար	2003թ. հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %	2003թ. հունվարը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝</b>	<b>394.7</b>	<b>153.0</b>	<b>69.7</b>
<b>Երկաթուղային տրանսպորտով</b>	<b>125.1</b>	<b>135.8</b>	<b>72.9</b>
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	14.4	134.6	70.6
ներկրվել են բեռներ	71.3	100.7	74.7
ներհանրապետական փոխադրումներ	39.4	3.7անգամ	70.6
<b>ավտոտրանսպորտով</b>	<b>129.8</b>	<b>204.7</b>	<b>52.9</b>
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	3.5	70.0	50.0
ներկրվել են բեռներ	17.5	116.7	64.8
ներհանրապետական փոխադրումներ	108.8	2.5անգամ	51.5
<b>օդային տրանսպորտով<sup>1</sup></b>	<b>0.4</b>	<b>80.0</b>	<b>44.4</b>
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	0.1	50.0	33.3
ներկրվել են բեռներ	0.3	100.0	50.0
<b>խողովակաշարային տրանսպորտով</b>	<b>139.4</b>	<b>136.7</b>	<b>100.4</b>

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվարին, %



2002թ. հունվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 35.7%, ավտոմոբիլայինը՝ 24.6%, օդայինը՝ 0.2%, խողովակաշարայինը՝ 39.5%:

<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

**Երկաթուղային տրանսպորտ:** 2003թ. հունվարին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 35.8%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 57.0% (2002թ. հունվարի 76.9%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 11.5% (2002թ. հունվարի 11.6%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 31.5% (2002թ. հունվարի 11.5 %-ի դիմաց):

2002թ. հունվարին, ի տարբերություն 2003թ. հունվարի, հանրապետություն է ներկրվել բեռների հիմնական տեսակներից. սև մետաղներ՝ 0.6 հազ.տոննա և քիմիական ու հանքային պարարտանյութեր՝ 13.7 հազ.տոննա:

Ըստ բեռների հիմնական տեսակների 2003թ.հունվարին 2002թ. հունվարի նկատմամբ քարածխի փոխադրման ծավալն ավելացել է 15.0 անգամ, սև մետաղների ջարդոցինը՝ 3.8 անգամ, նավթ և նավթամթերքինը՝ 46.8%-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 33.3% - ով: Հացահատիկի և աղացվող մթերքի փոխադրման ծավալը նվազել է 30.3%-ով, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 20.0%-ով, ցեմենտինը՝ 13.3%-ով, հանքաքար երկաթի և մանգանի փոխադրման ծավալը՝ 11.1%-ով:

Վագոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվարին կազմել է 65 վագոն և 2002թ. հունվարի նկատմամբ ավելացել 21 միավորով, իսկ բեռնումը կազմել է 31 վագոն և ավելացել 19 միավորով: Նույն ժամանակաշրջանում վագոնապտույտը կազմել է 15.0 օր և 2002թ. հունվարի նկատմամբ դանդաղել է 3.6 օրով:

**Ավտոմոբիլային տրանսպորտ:** 2003թ. հունվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 104.7%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 13.5% (2002թ. հունվարի 23.6%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.4% (2002թ. հունվարի 11.3%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.7% (2002թ. հունվարի 7.9%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 20.0% (2002թ. հունվարի 6.0%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 83.8% (2002թ. հունվարի 68.5%-ի դիմաց):

**Օդային տրանսպորտ:** 2003թ. հունվարին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2002թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 20.0%-ով, որից ՀՀ ներկրված բեռների բաժինը կազմել է 75.0% (2002թ. հունվարի 60.0%-ի դիմաց), իսկ ՀՀ-ից արտահանված բեռների բաժինը՝ 25.0% (2002թ. հունվարի 40.0%-ի դիմաց):

**Խողովակաշարային տրանսպորտ:** 2003թ. հունվարին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 36.7%-ով:

**Բեռնաշրջանառություն:** 2003թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 38.9%-ով:

**Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2003թ. հունվար	2003թ. հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %	2003թ. հունվարը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ</b>	<b>226.8</b>	<b>138.9</b>	<b>94.0</b>
<i>այդ թվում՝</i>			
Երկաթուղային տրանսպորտով	33.2	137.2	80.6
ավտոտրանսպորտով	5.7	4.1 անգամ	44.9
օդային տրանսպորտով	0.3	60.0	75.0
խողովակաշարային տրանսպորտով	187.6	136.7	100.4


1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

**Ուղևորափոխադրումներ:** 2003թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 9.5%-ով:

**Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2003թ. հունվար	2003թ.հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ,%	2003թ.հունվարը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ,%
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝</b>	<b>12847.3</b>	<b>109.5</b>	<b>93.2</b>
Երկաթուղային տրանսպորտով	75.8	117.3	108.0
ավտոտրանսպորտով	10873.6	111.2	93.1
օդային տրանսպորտով <sup>1</sup>	54.3	111.3	59.4
Էլեկտրատրանսպորտով	1843.6	100.4	95.0

**Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվարին, %**



2002թ. հունվարին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 83.4%, օդային տրանսպորտինը 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 15.6%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2003թ. հունվարին կազմել է 65.1%, իսկ տրոլեյբուսով՝ 21.4%, տրամվայով՝ 10.6% և ճոպանուղով՝ 2.9 %:

**Ուղևորաշրջանառություն:** 2003թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 17.5%-ով:

<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար	2003թ.հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %	2003թ.հունվարը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ այդ թվում՝</b>	<b>203.9</b>	<b>117.5</b>	<b>84.1</b>
երկաթուղային տրանսպորտով	2.8	87.5	77.8
ավտոտրանսպորտով	148.2	127.0	90.1
օդային տրանսպորտով	45.5	98.5	68.2
էլեկտրատրանսպորտով	7.4	100.0	94.9

**Տրանսպորտային պատահարներ:** Հանրապետությունում 2003թ. հունվարին ճանապարհատրանսպորտային պատահարները 2002թ. հունվարի նկատմամբ աճել է 1.7%-ով:

**Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները**

	2003թ. հունվար	2003թ.հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %	2003թ. հունվարը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %
<b>Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհամենը</b>	<b>61</b>	<b>101.7</b>	<b>98.4</b>
Զոհվել են, մարդ	6	40.0	40.0
Վիրավորվել են, մարդ	86	119.4	175.5